ԱՋԱՏ ԲՈՋՈՅԱՆ
պատմական գիտ. դոկտոր, ԱԻ

ՔԱՂԿԵԴՈՆԻ ՏԻԵԶԵՐԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ ԿԱՆՈՆՆԵՐԻ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Տիեզերական Եկեղեցու պատմության մեջ ուրույն տեղ ունի Քաղկեդոնի ժողովը (451 թ.), որի ընթացքը եւ ընդունած վավերագրերը հակամետ գնահատականների են արժանացել եւ մնում են համաշխարհային պատմագրության ուշադրության կենտրոնում[1]*: Հին կարգի եկեղեցիներից*[2] *այդ ժողովի ուղղափառությունը ճանաչում են Հռոմի պապությունը եւ Կ. Պոլսի պատրիարքությունը, ինչպես նաեւ տարբեր ժամանակներում վերջիններից սերված եկեղեցական կառույցները (մելկիտ, մարոնի, որոնք այժմ գտնվում են Կաթոլիկ եկեղեցու նվիրապետական համակարգում, ինչպես նաեւ հույն, վրաց, բուլղար, ռումին, ռուս եկեղեցիները եւ այլ եկեղեցական կազմակերպություններ): Հիմնական արեւելյան եկեղեցիները (հայ, հակոբիկ, նեստորական, ղպտի, եթովպական եւն.) դեռեւս վաղ միջնադարում չեն ընդունել այդ Տիեզերական ժողովի դավանաբանական որոշումները*[3]*, իրենց կանոնագրքերում չեն տեղադրել այդ ժողովում հաստատված կանոնախումբը, թեպետ տարբեր ժողովածուներում պահպանվել են Քաղկեդոնի ժողովի հետ կապված բազմազան նյութեր*[4]*: Հռոմի պապական եկեղեցին ցայսօր չի հաստատել*

[1] Տես Das Konzil von Chalkedon. Geschichte und Gegenwart: Im Auftrag der Theologischen Fakultät S. J. Sankt Georgen Frankfurt/Main, herausgegeben von Aloys Grillmeier S. J. und Heinrich Bacht S. J., Bd. III: Chalkedon heute, Würzburg, 1954:

[2] Հին կարգի եկեղեցիներ ասելով՝ ջրբաժան ենք փորձել անցկացնել Լյութերից առաջ իրենց գոյությունը հաստատած բոլոր եկեղեցիների եւ ԺԷ. դարում նոր սկզբունքներով ձեւավորված ռեֆորմիստական (բարենորոգչական) եկեղեցիների միջեւ:

[3] **A. Grillmeier**, Jesus der Christus im Glauben der Kirche, Bd. 2/1: Das Konzil von Chalcedon (451): Rezeption und Wiedersprüche (451-518), Freiburg-Basel-Wien, 1991², S. 71-86.

[4] Տես **M. Albert, R. Beylot, R.-G. Coquin, B. Outtier, Ch. Renoux,** Christianismes Orientaux: Introduction à l'étude des langues et des littéra tures, Introduction par A. Guillaumont, Paris, 1993, p. 138, 227, 245, 306, 372: Այս գրքի մասին տես ՊԲՀ, 1995, թ. 1, էջ 239-243:

Քաղկեդոնի ժողովի կանոններում տեղ գտած թիվ 28՝ Տիեզերական եկեղեցու նվիրապետական համակարգը կարգավորող կանոնը, որն արտակարգ իրավունքներ էր վերապահում Կ. Պոլսի պատրիարքական աթոռին[5]*:*

Քաղկեդոնի ժողովից հետո երկար ժամանակ Հայ, բյուզանդական եւ քույր եկեղեցիները բանակցություններով վիճարկում էին այդ ժողովում ընդունված դավանաբանական որոշումների ուղղափառությունը[6]*: Ը. դարում՝ Հովհաննես Օձնեցի կաթողիկոսի իշխանության տարիներին, Հայ Եկեղեցին վերջնականապես կողմնորոշվեց եւ Մանազկերտի ժողովում (726 թ.) մերժեց Քաղկեդոնի ժողովի որոշումները*[7]*: Այդ դիրքորոշման ամենավառ ապացույցն այն է, որ Հովհաննես Օձնեցու կազմած Հայոց Կանոնագրքում տեղ չեն գտել Քաղկեդոնի եւ նրանից հետո Տիեզերական եկեղեցու կողմից հրավիրված եւ Կ. Պոլսի ու Հռոմի աթոռների կողմից իրավական ճանաչում ստացած ժողովների կանոնախմբերը:*

Այնուամենայնիվ, Հայոց մատենագրության մեջ պահպանվել են ինքնուրույն մատենագրական եւ թարգմանական բնագրեր, որոնցում անդրադարձ կա այդ ճակատագրական ժողովի որոշումներին[8]*: Դրանց մեջ հատկապես կարեւորվում են թարգմանական երկու երկ: Վաղ միջնադարյան թարգմանությամբ պահպանվել է Լեւոն պապի (440-461)՝ Կ. Պոլսի*

---

[5] Տես **J. Meyendorff** (Orth.), La primauté romaine dans la tradition canonique jusqu'au concile de Chalcédoine. - Istina 4, 1957, p. 476-81, հատկապես էջ 482: Հայաստանում խնդրի ընկալման շուրջ. **L. Zekiyan**, Quelques réflxion préliminaires sur l'identité chrétienne de l'Arménie: l'université de la parole et son incarnation dans la vie de l'ethnos, Connaissance des Pères de l'Église, 81, mars 2001, p. 21-37.

[6] Տես **N. Garsoïan**, L'église arménienne et le grand schism d'Orient, Lovanii 1999, p. 1-409 (Corpus scriptorium christianorum orientalium, vol. 574, Subsidia, t. 100): Այս գրքի մասնագիտական գրախոսությունը տես **Լ. Զեքիեան**, «Էջմիածին», 2016, Բ., էջ 127-139: Արեւելքում Քաղկեդոնի արձագանքի մասին տես **P. T. R. Gray**, The defence of Chalcedon in the East (451-553), Leiden, 1979. **J. Meyendorff**, Imperial unity and Christian divisions: the Church 450-680. New York, 1989:

[7] Տես **Ա. Բոզոյան**, Հովհան Օձնեցին եւ եկեղեցական ժողովները. Սուրբ Հովհան Օձնեցի հայրապետը եւ իր ժամանակը. 2003, հունիսի 3-5, Հաղպատի վանք (գիտաժողովի նյութեր), Ս. Էջմիածին, 2004, էջ 77-91:

[8] Այս խնդրի շուրջ ամենաընդգրկուն աշխատանքն է. **K. Sarkissian**, The council of Chalcedon and the Armenian Church, New York, 1975 (հայերեն թարգմանությունը տես **Գ. Սարգիսեան**, Քաղկեդոնի ժողովը եւ Հայոց Եկեղեցին, անգլերենից թարգմանեցին՝ Զաքարիա աբդ. Բաղումեանը եւ Վահրամ քհն. Մելիքեանը, Նիւ Եորք, Լոնտոն, 2012 (Գարեգին Ա. Կաթողիկոս Ամենայն Հայոց, Կրօնական, Աստուածաբանական եւ հայագիտական երկեր (Հայերեն շարք, Ը. հատոր), խմբագիր՝ Վազգեն Ղուկասեան, հրատարակութիւն՝ Հայկ եւ Էլզա Տիտիզեան ֆոնտի: **Գարեգին Ա.**, Կրօնական, Աստուածաբանական եւ Հայագիտական Մատենաշար, թիւ 12), ռուսերեն թարգմանությունը տես **Г. Саркисян**, Халкедонский собор и Армянская церковь, Перевод с английского Е. В. Карчагина, Первопрестольный Св. Эчмиадзин, 2014):

Փլաբիանոս (446-449) պատրիարքին ուղղած «Տոմարը», որը Քաղկեդոնի ժողովի դավանաբանական որոշումների հիմքն է: Այս բնագիրը հրատարակվել է ԺԹ. դարի սկզբին Վենետիկի Մխիթարյան միաբանության անդամների եւ երջանկահիշատակ աբբահայր Գ. Ագոնցի ջանքերով[9]*: Մյուսը Քաղկեդոնի ժողովում ընդունված կանոններն են, որոնց հայերենով պահպանված թարգմանությունն առաջին անգամ հրատարակվում է ներկա հրապարակման մեջ: Այս բնագրի հայերեն թարգմանությունն ամենայն հավանականությամբ պատկանում է ԺԱ.-ԺԲ. դարերի հայ-քաղկեդոնական միջավայրին: Սակայն դա չի նշանակում, որ Հայոց մատենագրությանը Քաղկեդոնի ժողովի վավերագրերը եւ կանոնները հայտնի են դարձել միայն այդ ժամանակ: Մեր եկեղեցական մատենագրությանը հնուց ի վեր հայտնի «Գիրք թղթոց» եւ «Կնիք Հաւատոյ» ժողովածուներում բազմիցս քննարկվել են Քաղկեդոնի ժողովի դավանաբանական դրույթները եւ դրանց դեմ գրվել են հակաճառություններ*[10]*:*

Քաղկեդոնական հայերի մատենագրական գործունեությունը հայագիտության մեջ համակողմանիորեն ուսումնասիրված չէ: Միակ քիչ թե շատ համապարփակ հետազոտությունն այդ բնագավառում, մատենագրական սկզբնաղբյուրների եւ ձեռագրական նյութերի վերհանումով, պատկանում է Վիեննայի Մխիթարյան միաբանության անդամ Հ. Ներսես վրդ. Ակինյանին, ով իր «Սիմէոն Պղնձահանեցի» մենագրության հավելվածն ամբողջովին նվիրել է մեզ հետաքրքրող խնդրին[11]*:*

Հրատարակվող կանոնագիտական բնագիրը մասն է կազմում բյուզանդական «XIV տիտղոսների կանոնագրք»-ի, որի այլալեզու բնագրերի հետազոտությամբ եւ հրապարակմամբ զբաղվել է եկեղեցական կանոնա-

---

[9] Տես «Սկզբնագիրք տումարի սրբոյն Լեւոնի եւ Սահմանի սուրբ ժողովոյն Քաղկեդոնի, Անաչառ եւ հաւատարիմ թարգմանութեամբ ի լոյս ընծայեաց, միաձայնութեամբ վկայութեանց սուրբ Հարց եւ Վարդապետաց Հայաստանեայց եկեղեցւոյ, եւ սրբոյն Կիւրղի մեծի Աղեքսանդրացւոյ, հանդերձ համառօտ ծանօթութեամբք ի ցրումն սխալ թարգմանութեանց, եւ ի բարձումն ամենայն գայթակղութեանց: Աշխատասիրեալ յաշակերտաց մեծին Մխիթարայ Աբբահօր: Եւ տպագրեալ հրամանաւ Տեառն Ստեփաննոսի Գերապատիւ Աբբայի Գիւվէրր Ագոնց, եւ Աստուածապատիւ Արքեպիսկոպոսի Սիւնեաց, ի Վէնէտիկ, իվանս Սրբոյն Ղազարու,» 1805 (:ՌՄԾԴ:):

[10] Հայերենով պահպանված որոշ բնագրերի մասին տես **Ն. եպս. Պողարեան**, Հայ գրողներ. Ե.-ԺԷ. դար, Երուսաղէմ, 1971, էջ 106-108, 112-115, 125-127 եւն., հմմտ. նաեւ **K. Sarkissian**, The Council of Chalcedon..., p. 175-213: Խնդրին վերաբերող նոր սկզբնաղբյուրներ հրապարակվում են նաեւ այսօր, տես օրինակ **M. van Esbroeck**, Traité acéphale arménien sur les trois premiers Conciles et son attribution probable à Jean Mayravanetsi, Orientalia Christiana Periodica, Vol. 68, fasc. I, Roma 2002, p. 89-174, հատկապես էջ 120 եւն:

[11] **Ն. Ակինեան**, Սիմէոն Պղնձահանեցի եւ իր թարգմանութիւնները վրացերենէ, Վիեննա 1951, էջ 225-262 (Ազգային Մատենադարան, ՃԿԴ):

գետների, բյուզանդագետների եւ արեւելագետների մի քանի սերունդ: Առանձնակի հիշատակության են արժանի կարդինալ Պիտրայի կողմից Փոտ պատրիարքին վերագրված[12] *բյուզանդական Կանոնագրքի հետազոտությունն ու բնագրերի հրապարակումը 1866 թ. եւ ԺԹ. դարի սկզբին Ռուսաստանի գիտությունների ակադեմիայի իսկական անդամ Վ. Բենեշեւիչի հետազոտությունները, որոնց հիմքի վրա վերջինս փորձեց վերակազմելով հրապարակել "Кормчая Книга"-ի սլավոնական բնագիրը*[13]*:*

Վ. Բենեշեւիչը[14] *եւ իրավունքի գերմանացի պատմաբան Է. Շվարցը*[15] *իրենց հետազոտություններով կարողացան ապացուցել, որ բյուզանդական կանոնագիրքը, որի կազմում սկսած ԺԲ. դարից (կանոնագետ-մեկնաբան Բալսամոնի կողմից), վերագրվում էր Կ. Պոլսի Փոտ պատրիարքին (858-68, 877-86) եւ անվանվում է Նոմոկանոն, իր նախօրինակն է ունեցել դեռեւս Զ. դարում՝ Հովհաննես Սքոլաստիկոս պատրիարքի (565-577) հովվապետության ժամանակաշրջանում, եւ հետագայում անվանվել է ԺԴ. տիտղոսների կանոնագիրք, որն ամբողջական տեսք է ստացել Է. դարի ընթացքում, վերստին խմբագրվել է 882/3 թ. Փոտ պատրիարքի կողմից, մեկնություններով հարստացվել է ԺԱ.-ԺԲ. դդ.*[16]*: Ռուս ակադեմիկոսն իր հետազոտություններով փորձեց ապացուցել, որ սլավոնական "Кормчая книга"-ն ԺԱ. դարում թարգմանվել է Փոտ պատրիարքի գահակալմանը նախորդած խմբագրությունից: Ի տարբերություն ԺԲ. դարի բյուզանդական կանոնագետ Բալսամոնի օգտագործած բնագրի՝ Զ. դարի կեսերից հետո կազմված ժողովածուն (իր խմբագրական տարբերակներով) կանոնների համահավաք է, որտեղ բացակայում են աշխարհիկ իրավական հուշարձանների վրա կատարված հղումները: Այս նույն բնագրի բյուզանդական կանոնագրքի տարբեր խմբագրություններից այն թարգմանվել է*

---

[12] Des Canons et des Collections canoniques de L'Église grecque, d'après l'édition de M. G. A. Rhalli, president de l'aréopage, par Le R. P. Dom. J.-B. Pitra, Religieux Bénédictin de la congregation de France, Paris, Librairie de A. Durand, 1858, p. 26, 37-48.

[13] "Древне-славянская Кормчая XIV титулов без толкований", труд В. Н. Бенешевича, т. I, СПб., 1906.

[14] **В. Н. Бенешевич**, Канонический сборник XIV титулов со второй половины VII века до 883 г., СПб., 1905, с. 3-4, 15-25:

[15] **Ed. Schwartz**, Die Kanonessamlungen der alten Reichskirche, Zeitschrift der Savingny-Stiftung für Rechtsgeschichte Abteilung, Bd. 25/1 (1936), S. 2-3.

[16] **H.-G. Beck**, Kirche und theologische Literature im byzantinischen Reich, München, 1959, S. 146, **Σ. Ν. Τρωιάνου**, Οι πηγές του βυζαντινού δικαίου, Αθήνα, Κομοτηνή, 1999, s. 134-137, 144-147. հմմտ. **В. Н. Бенешевич**, Канонический сборник XIV титулов..., с. 52-86:

նաեւ վրացերեն[17] եւ Քրիստոնյա Արեւելքի մի շարք (ասորերեն, արաբերեն, ղպտերեն, եթովպերեն եւն.) լեզուներով[18]:

Ամենայն հավանականությամբ այս ժողովածուի նախնական տարբերակի հետ գործ ունենք հայկական բնագրի պարագայում, որը պահպանվում է Վենետիկի Մխիթարյան մատենադարանում[19]: Հայերենով պահպանված «XIV տիտղոսների կանոնագրքի» միակ ձեռագրում բացակայում են ժողովածուի հունարենով եւ այլ լեզուներով եղած թե՛ նախափոտյան, եւ թե՛ փոտյան նախաբանները[20]: Վենետիկյան ձեռագրի առաջին մասում բերված է «XIV տիտղոսների կանոնագրքի» հոդվածների բովանդակային՝ համեմատական-համակարգված ցանկը, որը բաժանված է 14 տիտղոսների (հայերենում՝ "թղթերի"): Այստեղ տարբեր վերնագրերի ներքո նշվում են այն կանոնները, որոնք բովանդակային համապատասխանություններ ունեն եւ կողմնորոշել են ամբողջական ժողովածուի՝ գիտությանը հայտնի՝ «XIV տիտղոսների կանոնագիրք» վերնագիրը: Այնուհետեւ՝ հայերենով պահպանված բյուզանդական կանոնագրքի երկրորդ մասում, հունարեն բնագրի հետեւողությամբ, բերվում են Առաքելական կանոնները, յոթ Տիեզերական ժողովների (Ա. Նիկիա, Ա. Կ. Պոլիս, Եփեսոս, Քաղկեդոն, Բ. Կ. Պոլիս, Գ. Կ. Պոլիս, Բ. Նիկիա), Տիեզերական եկեղեցու տեղական ժողովների (Անկյուրիա, Նոր Կեսարիա, Գանգրա, Անտիոք, Լաոդիկիա,

---

[17] Այս կանոնագրքի միջնադարյան վրացերեն թարգմանության բնագրի ամբողջական հրապարակումը ընդարձակ առաջաբանով տես դոքտ Սչչուլոսչանոնո, გამოსაცემად მოამზადეს ე.გაბიძაშვილმა, ე.გიუნაშვილმა, მ. დოლაქიძემ, გ. ნინუამ, თბილისი, გამომცემლობა "მეცნიერება", 1975 (Մեծ նոմոկանոն, հրատարակության պատրաստեցին Է. Գաբիձաշվիլին, Է. Գիունաշվիլին, Մ. Դոլաքիձեն, Գ. Նինուան, Թբիլիսի, 1975):

[18] Տես **H. Kaufhold**, Sources of canon law in the Eastern Churches, The History of Byzantine and Eastern canon law to 1500, Edited by W. Hartmann and K. Pennington, Washington, 1984, 215-342, հատկապես էջ 222 եւ շարունակ., 227, 246 եւ շարունակ., 255 եւ շարունակ., 297 եւն.:

[19] Տես հմմտ. **Ա. Բոզոյան**, Հայ միջնադարյան իրավունքի պատմության հուշարձանները, «Էջմիածին», ԿԲ. տարի 2006, Է.-Ը., էջ 104-105

[20] Ձեռագրի պահպանվածության մասին պատկերացում կազմելու համար ըստ մամուլահամարների ներկայացնենք պահպանված թերթերը: Բացակայում է ձեռագրի սկիզբը: :Ա: մամուլից պահպանվել է թղ. 1ա-4բ վերջին թերթերը, որից առաջ, պետք է ենթադրել, գտնվում էր ժողովածուի նախաբանը: :Բ: մամուլը 7 թերթ է (թղ. 6ա-12բ): Առկա է :Գ: մամուլի սկիզբի (13ա-19բ) եւ :Դ: մամուլի վերջի (20ա-29բ) թերթերը: :Ե: մամուլն ունի 12 թերթ (30ա-41բ): :Զ: մամուլն ունի 14 թերթ (42ա-55բ): :Է: մամուլն ունի 12 թերթ (թղ. 56ա-67բ): Առկա է :Ը: մամուլի սկիզբը (68ա-), :Թ: (-89բ), :Ժ: (-99ա), :ԺԱ: (-109բ), :ԺԲ: (-121բ) մամուլների վերջի թերթերը: :ԺԳ: մամուլն ունի 11 թերթ (122ա-131բ): :ԺԴ: -:ԻԴ: մամուլներից յուրաքանչյուրն ունի 12 թերթ. :ԺԴ: (132ա-143բ), :ԺԵ (144ա-155բ), :ԺԶ: (156ա-167բ), :ԺԷ: (168ա-179բ), :ԺԸ: (180ա-191բ), :ԺԹ (192ա-203բ), :Ի: (204ա-215բ), :ԻԱ: (216ա-227բ), :ԻԲ: (228ա-239բ), :ԻԳ: (240ա-251բ), :ԻԴ: (252ա-261բ): Վերջին՝ :ԻԵ: մամուլն ունի 11 թերթ (262ա-272բ): Նշանակում է :Բ:, :Գ:, :Դ:, :Ը:, :Թ:, :Ժ:, :ԺԱ:, :ԺԲ:, :ԻԵ: մամուլները ամբողջական չեն: Ձեռագիրը պակասավոր է նաեւ վերջից:

Սարդիկե, Կարթագեն եւն.), եկեղեցու Ս. Հայրերի (Բարսեղ Մեծ, Գենադիոս, Հովհան Միայնակյաց, Մաքսիմիոս, Սեւերիանոս, Գրիգոր Նյուսացի, Թեոփիլոս, Տիմոթեոս, Աթանաս, Կյուրեղ եւ Դիոնիսիոս Աղեքսանդրացիներ, Գրիգոր Սքանչելագործ եւն.) կանոնախմբերը: Կանոնախմբերի հայերեն բնագիրը երբեմն ընդմիջարկվում է մեկնություններով («սխոլիոն»): Հատկանշական է, որ հայերենով պահպանված բնագրի :Խ: (40) կանոնախմբի՝ իբրեւ վերնագիր պահպանվել է հետեւյալ հիշատակագրությունը. «Ի սինոդոսէն, որ եղեւ ի միաւորութիւն եկեղեց[ւ]ոյ յաւուրս Կոստադիանոսի եւ Ռամանոսի, մինն թագաւորել իսկ միւսն որ յայնժամ որպէս հայր թագաւորի արժանաւորութիւնն ունել» (թղ. 167բ): Ամենայն հավանականությամբ խոսքը վերաբերում է 920 թ. Կ. Պոլսում տեղի ունեցած եկեղեցական ժողովին, ուր քննարկվել են եկեղեցու կողմից արգելված չորրորդ ամուսնությանը վերաբերող խնդիրները: Հիշատակված կանոնախմբի գոյությունը հայերեն թարգմանված բյուզանդական կանոնագրքում թույլ է տալիս ենթադրել, որ այդ բնագրի հունարեն նախատիպը մասնակիորեն լրացվել է Ժ. դարում կամ դրանից հետո: Բյուզանդական կանոնագիտական գրականության մեջ տիրապետում է այն դրույթը, որ 920 թ. հրավիրված հենց այդ ժողովում է Բյուզանդական կայսրությունը այս ժողովածուն[21] հաստատել օրթոդոքս եկեղեցում: XIV տիտղոսների բյուզանդական կանոնագրքի բնագրի լրացման մասին է հուշում նաեւ հայերենով պահպանված թարգմանությանը ուղեկցող՝ բուլղարների իշխան Միքայելին վերագրվող «Յաղագս եւթն Սուրբ Տիեզերական եւ մեծամեծ սինոդոսացն եւ թէ զինչ է պատճառ նոցա ժողովելոյն» (թղ. 259ա-271բ) բնագիրը[22]: Բյուզանդական մատենագրության գիտակներին հայտնի է հիշատակված Միքայելի դավանաբանական նամակներից մեկը՝ նվիրված Ս. Հոգուն[23]: Հայերեն թարգմանությամբ պահպանված այդ երկը մի նոր վկայություն է բյուզանդական կանոնագիտական մատենագրության հետազոտությանը հայ մատենագրության բերած նպաստի մասին: Այն միաժամանակ հուշում է, որ հայերենով թարգմանված կանոնագրքի հունարեն նախատիպ-բնագիրը չէր կարող գրված լինել ավելի վաղ, քան

---

[21] Տես **H.-G. Beck**, Die Kirche..., S. 56: Ըստ վրաց XIV տիտղոսների կանոնագրքի՝ Է. Գաբիձաշվիլու վրացերեն թարգմանության համար հիմք հանդիսացած հունարեն բնագիրը պաշտոնականացվել է հենց այդ ժողովում տես დოდოსტულოსკანონი..., էջ 3, 94:

[22] Երկը հավանաբար կարելի է վերագրել Միքայել Վիսեւիչին, որն ապրել է Ժ. դարի առաջին կեսում. տես "The Oxford dictionary of Byzantium", Prepared at Dumbarton Oaks by Alexander P. Kazhdan ..., v. 2, New York, 1991, p. 1370.

[23] Տես **H.-G. Beck,** Die Kirche, S. 526:

Ժ. դարի Բ. կեսը, իսկ հայերեն ներկա թարգմանությունը կատարվել է ԺԱ. դարի վերջին կամ ԺԲ. դարի սկզբին: Պահպանված հայերեն բնագրի յուրահատկություններից մեկն էլ XIV տիտղոսների կանոնագիրք-ժողովածուի առաջաբանների եւ կանոններին ուղեկցող վերնագրերի բացակայությունն է[24]*: Հայերենով պահպանված կանոնագրքում բյուզանդական աշխարհիկ իրավունքի հուշարձանների որեւէ հղում չենք կարողացել գտնել:*

Հայերեն թարգմանությամբ պահպանված XIV տիտղոսների կանոնագրքի գլխակարգությունը հիմնականում համապատասխանում է կարդինալ Պիտրայի եւ Վ. Բենեշեւիչի հրապարակած հունարեն բնագրերին: Հայերեն բնագրի ամբողջական հրապարակումը թույլ կտա ավելի ամբողջական պատկերացում կազմել ԺԱ. դարում շրջանառության մեջ եղած XIV տիտղոսների այն հունարեն նախատիպի մասին, որը կիրառվել է Բյուզանդական կայսրության տարածքում եւ թարգմանվել բյուզանդական կայսերական եկեղեցուն հպատակ եկեղեցական կառույցների կողմից (մելկիտ, սլավոն, վրաց եւն.), ինչպես նաեւ, ներկա ձեռագրի հավաստմամբ, երկաբնակ կամ ծաթ կոչված հայերի կողմից: Հիշատակված խմբագրությունների համեմատական հետազոտությունը կարող է բացել նոր հորիզոններ բյուզանդական արեւելքի հոգեւոր-եկեղեցական կյանքը եւ աշխարհընկալման յուրահատկությունները բացահայտելու համար: Հատկանշական է, որ հայերենով պահպանված բյուզանդական կանոնագրքի հարուստ բովանդակությունը տառացիորեն չի կրկնում բյուզանդական XIV տիտղոսների կանոնագրքի ձեռագիր-կանոնագրքի գիտությանը հայտնի ձեռագրախմբերից որեւէ մեկը[25]*: Այս կանոնագրքի կարեւորությունը դեռեւս բացահայտված չէ հայոց կանոնագիտական գրականության դարավոր փորձի հետազոտության տեսանկյունից: Այդ իսկ պատճառով նախատեսում ենք մոտակա ժամանակներում ամբողջովին հրապարակել մեզ հասած հայերեն բնագիրը:*

Ինչպես ասացինք, Քաղկեդոնի ժողովի կանոնները եւս մտել են բյուզանդական XIV տիտղոսների կանոնագրքի ժողովածու: Հունարեն բնագրով հասած կանոնախումբը բաղկացած է 28 կանոններից, վերջում, իբրեւ 29 եւ 30 կանոն, տեղ են գտել նաեւ Դ. ժողովի որոշ նիստերի որոշումներն

---

[24] Տես **В. Н. Бенешевич**, Канонический сборник XIV титулов..., с. 93-104:

[25] Տարբեր ձեռագրախմբերի նկարագրությունները տես **В. Н. Бенешевич,** Канонический сборник XIV титулов..., с. 116-321.

իրենց քննարկումներով[26]: Քաղկեդոնի ժողովի բոլոր որոշումները հաստատվել են Մարկիանոս կայսեր (450-457) կողմից եւ Բյուզանդական կայսրությունում ստացել պետական օրենքի կարգավիճակ[27]. այդ իսկ պատճառով փորձենք ներկայացնել դրանց համառոտ բովանդակությունը: Քաղկեդոնի առաջին կանոնը հաստատում է նախորդ ժողովների կանոնների ուղղափառությունը: Ժողովը նկատի ունի այն կանոնախմբերը, որոնք ընդունվել են Քաղկեդոնից առաջ տեղի ունեցած ժողովներում եւ ընդգրկված են եղել Դ. ժողովի կանոնագրքում[28]: Երկրորդ կանոնում նզովքի է ենթարկվում սիմոնականությունը (այն է՝ հոգեւոր կոչման, աստիճանի եւ պաշտոնի վաճառքը կամ կաշառքով ձեռքբերումը) եւ դրան նպաստած յուրաքանչյուր անձ: Կանոնը տարբերակում է հոգեւոր եւ եկեղեցու կառավարման համակարգերը՝ թվարկելով դրանց աստիճանները: Գ.-Ե. կանոնները ընդունվել են Քաղկեդոնի վեցերորդ նիստում[29]: Երրորդ կանոնով պատիժ է սահմանվում այն եպիսկոպոսներին, կղերականներին եւ վանականներին, ովքեր արծաթասիրությունից դրդված՝ խառնվում են աշխարհիկ գործերին կամ դառնում են խնամակալ, բացառությամբ այն դեպքերի, երբ խնամարկուն երեխա է կամ այրի եւ չունի խնամակալ: Չորրորդ կանոնը կարգավորում է վանքերի եւ վանականի կյանքն ու գործունեությունը, նրանց արգելում է առանց եպիսկոպոսի կարգադրության խառնվել հոգեւոր եւ աշխարհիկ գործերին, կամ հեռանալ իրենց ապաստարանից ու կառուցել վանք ու եկեղեցի: Հինգերորդ կանոնը, որը բացակայում է մեր հրապարակած հայերեն բնագրից, հաստատում է նախկինում ըն-

[26] Քաղկեդոնի ժողովի կանոնախմբի հայերեն բնագիրը պարունակում է 26 համարակալված կանոն: Այնտեղ բերված հունարեն բնագրով հայտնի թիվ 5-ը եւ 22-ը, իսկ 29 եւ 30 կանոնները պարզապես համարակալված չեն:

[27] "The Cambridge history of Christianity", vol. 2: Constantine to c. 600, Edited by Augustine Casiday and Frederick W. Norris, Cambridge, 2007, p. 90-91.

[28] Տես **P. L'Huilllier**, Archbp., The church of the ancient councils, N. Y., 2000, p. 206-214 (հղումն ըստ "Православная энциклопедия"-ի): Այդ կանոնախմբերի հիմնական մասը, որոշակի բնագրական խմբագրություններով (բացի Կեսարիայի եւ հավանաբար Եփեսոսի Ա. ժողովի կանոնախմբերի), ներկայացված է նաեւ Հայոց պաշտոնական Կանոնագրքում (հմմտ. «Կանոնագրք Հայոց», Ա., աշխատասիրությամբ՝ Վազգեն Հակոբյանի, Երեւան, 1964, էջ 114-169, 176-242, 250-281, հմմտ. **M.-N. Shirinian, G. Muradyan, A. Topchyan**, The Armenian version of the Greek ecclesiastical canons, Frankfurt am Main, 2010 [Forschungen zur Byzantinischen Rechtsgeschichte, Bd. 24]): Այդ ժողովածուի հունարեն բնագիրը մեզ չի հասել: Կանոնագրքի լատիներեն թարգմանությունը վերագրվում է Դիոնիսիոս Կրտսերին (տես "Православная энциклопедия", т. IX, Москва, 2005, с. 611):

[29] «Պատմութիւն Տիեզերական ժողովոց եկեղեցւոյ որք յարեալս գումարեցան, զոր յօրինեալ է Հ. Պօղոս վարդապետի Յովնանեանց ի Մխիթ. ուխտէն», Վիեննա, 1847, էջ 326. **В. Цыпин**, Вселенский IV Собор. Правила собора - Православная энциклопедия, т. IX, Москва, 2005, с. 612:

դունված կանոնական արգելքները եպիսկոպոսների եւ կղերականների բնակության վայրը փոխելու մասին: Վեցերորդ կանոնը[30] *արգելում եւ անվավեր է համարում քահանաների եւ սարկավագների ինքնանպատակ՝ առանց տեղը (քաղաք, գյուղ, եկեղեցի կամ վանք) նկատի ունենալու, կատարած ձեռնադրությունը, անարգանքի է արժանացնում ձեռնադրողին: Յոթերորդ կանոնը*[31] *նզովքի է ենթարկում նրանց, ովքեր ընդունելով հոգեւոր կարգ, մտնում են զինվորական կամ աշխարհիկ որեւէ ծառայության մեջ եւ զղջալով չեն վերադառնում եկեղեցի: Ութերորդ կանոնը*[32] *կարգադրում է աղքատանոցների եւ վկայարանների կղերին հպատակվել քաղաքի եպիսկոպոսին, հակառակ դեպքում, դիմադրողները պատժի պիտի արժանան, իսկ միայնակյացներն ու աշխարհականները պիտի մնան առանց հաղորդության: Իններորդ կանոնը*[33] *կարգադրում է կղերի անդամների միջեւ վեճի դեպքում դիմել սեփական եպիսկոպոսին եւ ոչ մի դեպքում՝ աշխարհական դատավորի. ինչպես նաեւ՝ եթե որեւէ կղերական խնդիր ունի իր կամ այլ եպիսկոպոսի հետ, հարցը պետք է քննի եկեղեցական ժողովը: Իսկ եթե կայացած վճիռը չի բավարարում կողմերին՝ լինեն նրանք մետրոպոլիտ, եպիսկոպոս կամ կղեր, գործը հանձնվում է էկզարքին կամ Կ. Պոլսի աթոռի գահակալին: Տասներորդ կանոնը*[34] *չի արտոնում հոգեւորականին՝ երկու քաղաքի եկեղեցիներում ծառայել. մեկին՝ իբրեւ ձեռնադրված, մյուսին՝ սնոտի փառքով հրապուրված: Նմանները հեռացվում են իրենց հանգրվանած եկեղեցուց եւ պաշտոնավարում են այնտեղ, որտեղ ձեռնադրվել են, հակառակ դեպքում՝ եկեղեցուց եկեղեցի, այլ վկայարան, հիվանդատուն կամ աղքատանոց փոխադրվածներին կանոնն արգելում է հաղորդություն տալ: Իսկ եթե չեն պահպանում այս կանոնը, սուրբ ժողովը ձեռնադրված-մեղավորին զրկում է աստիճանից: Տասմեկերորդ կանոնը*[35] *պարտավորեցնում է բոլոր աղքատներին եւ կարոտյալներին փորձնական, այսինքն՝ խաղաղական թղթով ճանապարհ դնել եւ ոչ թե երաշխավորագրով, որը պետք է չափազանց մեծ երկյուղով գրել եւ տալ: Տասներկուերորդ կանոնը*[36] *հավաստում է, որ ոմանք, խախտելով եկեղեցական կանոնը, կաշառում են իշխանություններին եւ նույն մետրոպոլիտա-*

---

[30] Հայերեն բնագրում այս կանոնը կրում է :ե: (5) թվահամարը:
[31] Հայերեն բնագրում այս կանոնը կրում է :զ: (6) թվահամարը:
[32] Հայերեն բնագրում այս կանոնը կրում է :է: (7) թվահամարը:
[33] Հայերեն բնագրում այս կանոնը կրում է :ը: (8) թվահամարը:
[34] Հայերեն բնագրում այս կանոնը կրում է :թ: (9) թվահամարը:
[35] Հայերեն բնագրում այս կանոնը կրում է :ժ: (10) թվահամարը:
[36] Հայերեն բնագրում այս կանոնը կրում է :ժա: (11) թվահամարը:

կան աթոռի սահմաններում հիմնում են եւս մեկ աթոռ: Նման եպիսկոպոսներին ժողովը արտոնում է զրկել աստիճանից, քանի որ միայն նրանք պետք է վայելեն իշխանությունը եւ հոգան եկեղեցիների մասին, ովքեր գիր են ստացել թագավորական իշխանությունից: Տասներեքերորդ կանոնը[37] *արգելում է պատարագել այլ քաղաքի հոգեւորականին կամ ընթերցողին՝ առանց այդ քաղաքի եպիսկոպոսի երաշխավորագրի: Տասնչորսերորդ կանոնը*[38] *հավաստում է, որ որոշ գավառներում թույլատրվում է ընթերցողներին եւ երգողներին ամուսնանալ, բայց ոչ այլադավանի հետ: Իսկ եթե արդեն նման ամուսնությունից ծնվել է երեխա եւ հերձվածողների կողմից մկրտվել, կանոնը պարտադրում է մկրտել կաթողիկե եկեղեցում: Նմանատիպ ամուսնությունից ծնված մյուս երեխաներին կանոնը պարտադրում է մկրտել կաթողիկե եկեղեցում եւ արգելել ամուսնանալ հերձվածողի, հրեայի կամ հեթանոսի հետ, եթե վերջիններս դեռ դարձի չեն եկել: Կանոնադրությունները սպառնում են պատժել: Տասնհինգերորդ կանոնը*[39] *պարտադրում է սարկավագությունի ձեռնադրվող կնոջը ձեռնադրել քառասուն տարեկանը լրանալուց եւ փորձաշրջան անցնելուց հետո: Իսկ եթե ձեռնադրվելուց եւ պաշտոնավարելուց հետո ամուսնացել է, անարգելով Աստուծո շնորհը, իր ամուսնու հետ պետք է արժանանա նզովքի: Տասվեցերորդ կանոնով*[40]*վանականներն ու վանականուհիները ամուսնանալով պետք է զրկվեն հաղորդությունից, սակայն տեղի եպիսկոպոսն իրավունք ունի դրսեւորել նրանց նկատմամբ մարդասիրություն: Տասյոթերորդ կանոնը*[41] *արգելում է այլ թեմերի եպիսկոպոսներին՝ բռնությամբ յուրացնել ագարակներ եւ գյուղեր, մանավանդ եթե դրանք 30 տարի անընդմեջ պատկանել են այլ եպիսկոպոսական աթոռների: Իսկ եթե նախքան երեսուն տարին լրանալը նրանց մեջ վեճ է ծագում, պետք է դիմեն եպիսկոպոսական ժողովին: Եթե ժողովն էլ արդար որոշում չկայացնի, կարող են դիմել էքսարխոսին կամ Կ.Պոլսի աթոռին: Դրանից հետո վճիռ կարող է կայացնել թագավորական կամ քաղաքացիական իշխանությունը՝ ըստ եկեղեցականների ընակության կարգի: Տասնութերորդ կանոնն*[42] *արգելում է կղերականներին եւ միայնակյացներին՝ միմյանց երդում տալ, դավաճանել եպիսկոպոսներին կամ այլ հոգեւորականների. նմանները զրկվում են*

[37] Հայերեն բնագրում այս կանոնը կրում է :ժբ: (12) թվահամարը:
[38] Հայերեն բնագրում այս կանոնը կրում է :ժգ: (13) թվահամարը:
[39] Հայերեն բնագրում այս կանոնը կրում է :ժդ: (14) թվահամարը:
[40] Հայերեն բնագրում այս կանոնը կրում է :ժե: (15) թվահամարը:
[41] Հայերեն բնագրում այս կանոնը կրում է :ժզ: (16) թվահամարը:
[42] Հայերեն բնագրում այս կանոնը կրում է :ժէ: (17) թվահամարը:

իրենց աստիճանից: Տասներորդ կանոնը[43] *վերստին հաստատում է հին կանոնները, ըստ որոնց՝ մետրոպոլիտները պարտավորվում են տարին երկու անգամ գավառական ժողով հրավիրել եպիսկոպոսների մասնակցությամբ: Քսաներորդ կանոնն*[44] *արգելում է կղերականի փոխադրությունը քաղաքից քաղաք՝ բացառելով միայն նրանց, որոնց քաղաքը գրավվել է թշնամու կողմից, եւ նրանք մնացել են անհայրենիք: Հակառակ դեպքում՝ ժողովը որոշում է հաղորդությունից զրկել թե՛ այլ քաղաք տեղափոխված կղերականին եւ թե՛ նրան ընդունած եպիսկոպոսին այնքան ժամանակ, մինչեւ որ կղերականը վերադառնա հայրենի քաղաք: Քսանմեկերորդ կանոնը*[45]*, իններորդ եւ տասնյոթերորդ կանոնների հետեւողությամբ, օրինադրում է ընթացք չտալ աշխարհականների եւ կղերականների՝ իրենց եպիսկոպոսի եւ կղերի դեմ հարուցած մեղադրանքներին, մինչեւ որ չքննվեն մեղադրանքը ներկայացնողների շահագրգռությունները: Հայերեն հրապարակվող ընագրում բացակայում է Քաղկեդոնի քսաներկուերորդ կանոնը, ըստ որի՝ կարգից զրկվում են այն կղերականները, որոնք իրենց եպիսկոպոսի մահից հետո հափշտակում են վերջինիս, այն է, վանքի կամ եկեղեցու ունեցվածքը: Քսաներեքերորդ կանոնում*[46] *ժողովականները արգելում են կղերականներին եւ միայնակյացներին՝ առանց իրենց եպիսկոպոսի հրամանի՝ գնալ Կ. Պոլիս եւ երկար ժամանակ անհարկի մնալ այնտեղ: Հրամայում է Կ. Պոլսի եկեղեցու եկդիկոսին (եպիսկոպոսի քարտուղար) նրանց հիշեցնել, որ հեռանան մայրաքաղաքից, իսկ եթե չեն լսում, ուժով ուղարկել իրենց թեմերը: Քսանչորսերորդ կանոնն*[47] *արգելում է սեփականել վանական ունեցվածքը՝ պատժելով նրանց, ովքեր կօտարեն դրանք վանքից: Քսանհինգերորդ կանոնը*[48] *կարգադրում է թափուր մնացած եպիսկոպոսական աթոռի համար երեք ամսվա ընթացքում նոր եպիսկոպոս ձեռնադրել, հակառակ դեպքում՝ կպատժվեն, իսկ եպիսկոպոսական աթոռի գործերը այդ ընթացքում կկառավարի տնտեսը (իկոնոմ): Քսանվեցերորդ կանոնը*[49] *նվիրված է տնտեսի ինստիտուտին, ըստ որի՝ արգելվում է եպիսկոպոսին, առանց իկոնոմ նշանակելու, ձեռնամուխ լինել եկեղեցական գործերին, հակառակ դեպքում՝ դարձյալ պատիժ է սպառնում: Քսանյոթե-*

---

[43] Հայերեն ընագրում այս կանոնը կրում է :ժը: (18) թվահամարը:
[44] Հայերեն ընագրում այս կանոնը կրում է :ժթ: (19) թվահամարը:
[45] Հայերեն ընագրում այս կանոնը կրում է :ի: (20) թվահամարը:
[46] Հայերեն ընագրում այս կանոնը կրում է :իա: (21) թվահամարը:
[47] Հայերեն ընագրում այս կանոնը կրում է :իբ: (22) թվահամարը:
[48] Հայերեն ընագրում այս կանոնը կրում է :իգ: (23) թվահամարը:
[49] Հայերեն ընագրում այս կանոնը կրում է :իդ: (24) թվահամարը:

որդ կանոնը[50] *արգելում է ամուսնության համար կին փախցնելը: Փեսացուի հետ համագործակցած հոգեւորականին սպառնում է զրկել աստճանից, իսկ աշխարհականին՝ նզովել: Քսանութերորդ կանոնը*[51] *սահմանում է Կ. Պոլսի կամ Նոր Հռոմի եկեղեցական աթոռի ավագությունը՝ հիմք ընդունելով Տիեզերական Բ. ժողովի եւ երկրի մայրաքաղաք լինելու հանգամանքը: Այստեղ հավասարեցվում են Հռոմի եւ Կ.Պոլսի իրավունքները Տիեզերական եկեղեցու գործերում, սահմանվում է նրա իշխանությունը մի շարք մետրոպոլիտական աթոռների (Պոնտոս, Ասիա, Թրակիա եւն.) վրա: Հունարեն բնագրում քսանիններորդ թվահամարը ստացած կանոնը*[52] *վերաբերում է ժողովի ընթացքում Տյուրոսի Փոտինոս եւ Բիբլիտոնի Եվստաթիոս եպիսկոպոսների միջեւ առաջացած անհամաձայնության քննարկմանը, ըստ որի՝ խստիվ արգելվում է եպիսկոպոսին քահանայական աստիճանի իջեցնելու պատիժը: Եթե եպիսկոպոսը մեղավոր է, պետք է զրկվի հոգեւոր բոլոր աստիճաններից եւ աշխարհականների դաս անցնի, իսկ եթե արդարացված է, նրան պետք է վերադարձվի սեփական եպիսկոպոսական աստիճանը: Երեսուներորդ կանոնն*[53] *ունի մասնավոր բնույթ:*

Ներկա հրատարակության հիմքում դրել ենք Վենետիկի Ս. Ղազար Մխիթարյան վանքի թիվ 1661 ձեռագիրը[54]*, որը պարունակում է բյուզանդական կանոնագրքի բնագիրը: Մատյանն, ըստ հնագրական հատկանիշների, հավանաբար ընդօրինակվել է ԺԳ.-ԺԴ. դդ., ավելի վաղ քան 1352 թ., իսկ Ս. Ղազարի մատենադարան է մտել 1781 թ. հունվարին: Այն վանքի գրադարանին է հանձնել Հ. Սուքիաս վրդ. Աղամալեանը՝ ի հիշատակ Շոռոթեցի պարոն Ռաֆայելի:*

Քաղկեդոնի ժողովի կանոնախմբի փորձնական հրապարակումով հանձն ենք առնում իրականացնել «XIV տիտղոսների կանոնագրքի» ողջ

---

[50] Հայերեն բնագրում այս կանոնը կրում է :իե: (25) թվահամարը:

[51] Հայերեն բնագրում այս կանոնի վերնագիր է դիտված առաջին նախադասությունը, որը որեւէ թվահամար չի կրում: Բուն կանոնը հայերեն բնագրում կրում է :իզ: (26) թվահամարը:

[52] Հայերեն բնագրում այս հատվածը որեւէ թվահամար չի կրում:

[53] Հայերեն բնագրում այս հատվածը որեւէ թվահամար չի կրում:

[54] Մանրամասն նկարագրությունը տես Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մատենադարանին Մխիթարեանց ի Վենետիկ, հատոր Զ. Պատմագիրք Հայոց-Կանոնագիրք-Գրիգոր Նարեկացի-Ներսէս Շնորհալի-Ներսէս Լամբրոնացի-Աղօթագիրք, Յօրինեց Հ. Սահակ Վրդ. Ճէմճէմեան, Մխիթարեան ուխտէն, Վենետիկ - Ս.Ղազար, 1996, էջ 346-354: Ձեռագրի պարունակության վրա առաջին անգամ ուշադրություն է հրավիրել Հ. Ներսես Վ. Ակինյանը, բերելով Ս. Ղազարի միաբան Հ. Ներսես Վ. Տեր-Ներսեսյանի՝ իր խնդրանքով կատարած համառոտ նկարագրությունը. տես Ն. Ակինեան, Սիմէոն Պղնձահանեցի..., էջ 256-259:

բնագրի միջնադարյան հայերեն թարգմանության գիտական հրատարակությունը: Կարծում ենք՝ այս հատվածի հրապարակման գիտական արձագանքները մեզ ավելի կխրախուսեն՝ շարունակելու եւ վերջնակետին հասցնելու սկսված գործը: Ձեռագրի պատճենի ստացման եւ հրապարակման թույլտվության համար խոնարհագույն շնորհակալությունս եմ հայտնում Մխիթարյան միաբանության ընդհանուր աբբահայր Հ. Եղիա վրդ. Քիլաղբյանին:

Օգտագործված փակագծերի նշանակությունը, որոշ ուղղագրական նրբություններ.

{} - *գրչի հավելում-սրբագրումները,*

[] - *մեր միջամտությունները,*

] - *նշանի ձախ կողմում բերվում է տարընթերցումը, աջում՝ բնագրի ընթերցումը,*

++ - *նշանների մեջ են առնվել տարընթերցման հավելյալ բառերը,*

Ե *եւ* Է *տառերը ձեռագրում իրենց գրչությամբ գրեթէ չեն տարբերակվում:*

ա՛յ - *ձեռագրական հապավումը որպես կանոն բացել ենք* Աստուածոյ:

Կանոնների հերթական համարները ձեռագրի լուսանցքում են՝ հապավման նշանով:

Հայկական բնագրին զուգահեռ դրված է կարդինալ Պիտրայի հրատարակության մեջ տպագրված հունարենը՝ իր ձեռագրական տարընթերցումներով՝ տե՛ս **X. Concilii Oecumenici Chalcedonensis**, *Iuris ecclesiastici graecorum Historia et Monumenta iussu PII IX Pont. Max / curante I.B.Pitra S. R. E. Card, tom. I: A primo P.C. N. VI saeculum, Romae, Typis collegii urbani, MDCCCLXIV pp. 522 - 536 (տողատակում՝* **Pitra***): Հունարեն բնագրի տողատակում տրվում են նաեւ Վ. Բենեշեւիչի կազմած բնագրի տարընթերցումները. տե՛ս "Древнеславянская Кормчая XIV титулов без толкований" (труд В. Н. Бенешевича, т. I, СПб., 1906, с. 112 - 129 (տողատակում՝* **Бенешевич***): Օգտվել ենք նաեւ "Decrees of the Ecumenical Councils", Vol. 1: Nicea to Lateran V / Edited by Norman P. Tanner S. J., Original text established by G. Albergo, J. A. Dossetti, P.-P. Joannou, C. Leonardi, and P. Prodi, in consultation with H. Jedin,1990, p. 87-103 (տողատակում՝* **Tanner***) մեզ ժամանակով ավելի մոտ հրատարակությունից*[55]*:*

[55] Ի հավելումն՝ կանոնների այս հրատարակությունում բերվում է նաեւ յուրաքանչյուր կանոնի վերնագիրը, որը բացակայում է մեր բնագրում: Այդ իսկ պատճառով դրանք չեն մեջբերվում:

//(թղ. 70բ) :ԺԲ: Կանոնք :ՈԼ: սրբոց հարցն որոց ի Քաղկեդոն ժողովելոցն. իշխանութիւն Մարկիանոսի Աւգոստասի (sic) տիեզերական ժողով :Դ:*

Κανόνες τῶν χλ΄ ἁγίων πατέρων, ἐν χαλκηδόνι συνελθόντων ἐπὶ ὑπατείας Μαρκιανοῦ τοῦ αἰωνίον αὐγούστου καὶ τοῦ δηλωθησομένου τῇ πρὸ η΄ Καλ. Νοεμβρίου[57].

:ա: - Զորս ի սրբոց հարցն յիւրաքանչիւր սիւնոդոսի, մինչեւ ցայժ[մ] եդեալ կանոնս ունեալ արդարացուցաք:://(թղ.71ա)

α΄. Τοὺς παρὰ τῶν ἁγίων πατέρων καθ᾽ ἑκάστην σύνοδον, ἄχρι τοῦ νῦν ἐκτεθέντας κανόνας κρατεῖν ἐδικαιώσαμεν.[58]

:բ: Որ ոք եպիսկոպոս յաղարս ընչից ձեռնայդրութիւն արասցէ, եւ ի վաճառս ստոր ածէ զանվաճառելի շնորհն, եւ ձեռնադրէ յաղագս ընչից, եպիսկոպոս կամ գաւառի եպիսկոպոս, կամ քահանա կամ սարկաւագ, կամ զայլ ոք որոց ի կլերիկոսաց: Կամ թէ յառաջարկէ յաղագս ընչից իկոնոմոն, կամ եկդիմոս որ է դատաւոր կամ վրէժխնդիր, կամ եկեղեցապան, կամ զայլ ոք ի կանոնի: Վասն իւր զազրաշահութեանն, այնպիսին որ ձեռնադրեաց յանդիմանել վտանգեսցի յիւրում աշտիճանէն, եւ ձեռնայդրեալն ոչ ինչ աւգտեսցի ի վաճառական ձեռ[ն]այդրութենէն կամ ի յառաջարկելոյն, այլ եղիցի աւտար յարժանաւորութենէն. կամ ի հոգալալոյն(sic). որում ի ձեռն ընչիցն էհաս: Եւ եթէ ոք միջնորդեալ գտանիցի. այնպիսի զազիր եւ անպատշաճ առուածոյս, եւ նայ եթէ կլերիկոս իցէ՝ անկցի յիւրմէ աշտիճանէն, եւ թէ աշխարհական կամ միակեաց. նզովեսցի:

---

* Հայերեն ձեռագրի ձախ լուսանցքում, սույն վերնագրի վերեւում.«չորրորդ սուրբ ժողովն» մակագրությունն է, կատարված նույն գրչի ձեռքով:

[57] **Pitra** - In vaticano 2, 34, palat; σεπτεμβρίου - vatitic. 2; Titulus vulgates in conciliis: Ὅροι ἐκκλησιαστικοὶ ἐκφωνηθέντες παρὰ τῆς ἁγίας καὶ οἰκουμενικης συνόδου, τῆς ἐν χαλκηδόνι συναχθείσης; In vallicelliano: Κανόνες τῶν χλ΄ ἁγίων καὶ μακαρίων πατέρων, τῶν ἐν χαλκηδόνι συνελθόντων ἐπὶ Μαρκιανοῦ τοῦ εὐσεβεστάτου βασιλέως, **Бенешевич** - Κανόνεςτῶνχλ΄ ἁγίων πατέρων τών ἐν Καλχηδόνι συνελθόντων ὑπατείας Μαρκιάνου τοῦ αἰωνίου αὐγούστου καὶ τοῦ δηλωθησομένου τῇ πρὸ Η΄ καλανδῶν νοεμβρίων; cod. Σύνοδος δ᾽in m. рукой XIII в V заглавиеиное: Κανόνες τῶν χλ΄ ἁγίων καὶ μακαρίων πατέρων τῶν ἐν Χαλκηδόνι συνελθόντων ἐπὶ Μαρκιανοῦ τοῦ εὐσεβεστάτου βασιλέως.

[58] **Бенешевич** - Can. 1. Τοὺς ἀπὸ τῶν ἁγ. π. petroburg. 2.

β ʹ.[59] Εἴ τις ἐπίσκοπος ἐπὶ χρῆμασι χειροτονίαν ποιήσαιτο[60], καὶ εἰς πρᾶσιν καταγάγοι τὴν ἄπρατον χάριν, καὶ χειροτονῆσοι ἐπὶ χρῆμασιν ἐπίσκοποι[61], ἢ χωρεπίσκοπον, ἢ πρεσβυτέρους[62], ἢ διακόνους[63], ἢ ἕτερόν τινα τῶν ἐν τῷ κλῆρῳ καθηριθμημένων[64], ἢ προβάλλοιτο[65] ἐπὶ χρῆμασιν οἰκονόμον, ἢ ἔκδικον, ἢ παραμονάριον, ἢ ὅλως τινὰ τοῦ κανόνος, δί αἰσχροκέρδειαν[66] οἰκείαν· ὁ[67] τοῦτο ἐπιχειρῆσας ἐλεγχθεὶς, κινδυνευέτω περὶ[68] τὸν οἰκεῖον βαθμόν. Καὶ ὁ χειροτονούμενος, μηδὲν ἐκ τῆς κατ᾽ ἐμπορίαν ὠφελείσθω χειροτονίας ἢ προβολῆς ἀλλ᾽ ἔστω ἀλλότριος τῆς ἀξίας ἢ[69] τοῦ φροντίσματος, οὗπερ ἐπὶ χρῆμασιν ἔτυχεν. Εἰ δέ τις καὶ μεσιτεύων φανείη τοῖς οὕτως αἰσχροῖς καὶ ἀθεμίτοις λῆμμασι, καὶ οὗτος, εἰ μὲν κληρικὸς εἴη, τοῦ οἰκείου ἐπιπτέτω βαθμοῦ· εἰ δὲ λαϊκὸς, ἢ μονάζων[70], ἀναθεματιζέσθω.[71]

:գ: Եկն ի սուրբ սինոդոսն, եթէ որք ի վիճակի ընդրեալ են ոմանք, եւ վասն զազրայշահութեան լինիցին աւտար ստացուածոց վարձականք, եւ ինչս աշխարհականս ի գործս արկանեն, եւ Աստուածոյ պաշտաւնին հեղգացեալք, յաշխարհականաց ընթանան ի տ//(թղ. 71բ)ունս, եւ ընչից ձեռնարկութիւնս ընդունիցին վասն արծաթասիրութեանն: Հրամաեաց արդեւք սուրբ ժողովս մի եւս այնուհետեւ ոչ եպիսկոպոս, ոչ կլերիկոս, ոչ միա[յնա]կե[ա]ց, կամ վարձաւորիլ ստացուածս, կամ յիրաց աշխարհականաց հոգս ածեալ զինքն: Բայց միայն թէ յաւրինացն կոչեսցի յանհրաժարելի պատճառս, կամ թէ քաղաքին եպիսկոպոսն եկեղեցականաց հոգալ հրամայէ իրացն, կամ որբոց եւ այրեաց, որք ոչ ունիցին խնամարկողս, կամ դիմաց որոց ընդ եկեղեցական իշխա-

[59] **Tanner** - Cf. Can. ap. 29-30 (CSP 21); conc. Laod. (325/381), c. 12 (CSP 135); Basilius Caes. c. 90 (CPG 175-178).
[60] **Бенешевич** - ποίσοιτὸ Tanner - ποιῆσοιτο.
[61] **Бенешевич** - ἐπίσκοπον ἐπὶχρήμασιν.
[62] **Tanner** - πρεσβύτερον.
[63] **Tanner** - διάκονον.
[64] **Бенешевич** - καταριθμουμένων.
[65] **Бенешевич, Tanner** - προβάλοιτο.
[66] **Бенешевич** - αἰσχροκερδίαν.
[67] **Бенешевич** - ὁ проп. V.
[68] **Tanner** - εἰς] περὶ.
[69] **Tanner** - ἤ.
[70] **Tanner** - μοναχός.
[71] **Pitra** - Can. 2. Κατάγοι Io. Antioch. tit. 11. - χειροτονήσῃ vatic. 834, dicendus infra vatic. 4. - ἢ χορεπίσκοπον om. Ioan. Antioch. - πρεσβύτερονἢ διάκονον vat. 1,2, Ioan. Antioc. - καταριθμουμένων vatic. 2, Ioan. Antioch. palatin. - προβάλοιτο id. - ἢ προσμονάριον Bruns. - καὶ ἐλεγχθεὶς Ioan. Antioch. - οἰκείαν om. Bevereg. ὅπερ λειτουργεῖν ἐπὶ χρῆμασιν Ioan. Antioch. - φανῇ Nomocan. russ. - λαϊκὸς ἢ Μοναχὸς Ioan. Antioch.

նուիթեամբ իցեն վասն ահին Աստուածոյ: Իսկ եթէ ոք վեր անցանել յայնմհետէ ձեռնարկէ զսահմանեալս, այնպիսին ընդ եկեղեցական պատժաւք լիցի:

γ΄.[72] Ἦλθεν εἰς τὴν ἁγίαν σύνοδον, ὅτι τῶν ἐν τῷ κλήρῳ κατειλεγμένων τινὲς, διά αἰσχροκέρδειαν[73], ἀλλοτρίων κτημάτων γίνονται μισθωταὶ, καὶ πράγματα κοσμικά ἐργολαβοῦσι[74], τῆς μὲν τοῦ Θεοῦ λειτουργίας καταῤῥαθυμοῦντες[75], τοὺς δὲ τῶν κοσμικῶν ὑποτρέχοντες οἴκους, καὶ οὐσιῶν χειρισμοὺς ἀναδεχόμενοι διά φιλαργυρίαν. Ὥρισε τοίνυν ἡ ἁγία καὶ μεγάλη[76] σύνοδος, μηδένα τοῦ λοιποῦ, μὴ ἐπίσκοπον, μὴ κληρικὸν, μὴ μονάζοντα, ἢ μισθοῦσθαι κτῆματα, ἢ πραγμάτων ἐπεισάγειν ἑαυτὸν κοσμικαῖς διοικήσεσι[77]· πλὴν εἰ μήπου ἐκ νόμων καλοῖτο εἰς ἀφηλίκων[78] ἀπαραίτητον ἐπιτροπὴν, ἢ ὁ τῆς πόλεως ἐπίσκοπος, ἐκκλησιαστικῶν ἐπιτρέψαι[79] φροντίζειν πραγμάτων, ἢ ὀρφανῶν καὶ χηρῶν ἀπρονοήτων, καὶ τῶν προσώπων τῶν μάλιστα τῆς ἐκκλησιαστικῆς δεομένων βοηθείας, διά τὸν φόβον τοῦ Θεοῦ[80]. Εἰ δέ τις παραβαίνειν τά ὡρισμένα τοῦ λοιποῦ ἐπιχειρήσει[81], ὁ τοιοῦτος ἐκκλησιαστικοῖς ὑποκείσθω ἐπιτιμίοις.[82]

:դ: Որք ճշմարտայպէս եւ արփիայհրաշաբար հաղորդեսցին կրաւնաւորական վարուց, վայելչական արժանաւորեսցին պատվոյն: Եւ քանզի ոմանք զմիակեցաց ընկալեալք զձեւ, եւ զեկեղեցական եւ զքաղաքացի գործէն զգործս, շրջելով անզգուշայբար ի քաղաքս, եւ ոչ այս միայն, այլեւ վանք չինեն իւրեանց առանձին խորհեսցին: Հաճոյ թուեցաւ սինոդոսին, ոչ երբէք չինել ոչ վանս եւ ոչ եկեղեցիս, առանց գիտելոյ եպիսկոպոսի քաղաքին: Իսկ զոր յիւրաքանչիւր քաղաք եւ ի գաւառ,

---

[72] **Бенешевич** - γ΄ проп. cod.; **Tanner** - Cf. Can. ap. 6, 81, 83 (CSP 11, 49, 50), conc. Carth. (419), c. 16 (CSP 230).

[73] **Бенешевич, Tanner** - δι ᾽αἰσχροκερδίαν.

[74] **Бенешевич** - ἐργολαμβάνονταιV.

[75] **Tanner** - καταρθυμοῦντες.

[76] **Бенешевич** - καὶ μεγάλη (cod. V вставл. над строкой тукой XIIIв.).

[77] **Tanner** - κοσμικῶνπαρεισάγειν ἑαυτὸνδιοικητήν] ἐπεισάγειν ἑαυτὸν κοσμικαῖς διοικήσεσι

[78] **Бенешевич** - ἀνηλίκων V.

[79] **Tanner** - ἐπιτρέψοι.

[80] **Бенешевич,Tanner** - κυρίου] θεοῦ.

[81] **Бенешевич** - ἐπιχειρήσοι V.

[82] **Pitra** - Can. 3. Δὶ οἰκείαν αἰσχροκ. Brüns. et vulg. council. - ἐργολαμβάνται vallicell. - πραγμάτων κοσμικῶν παρεισάγειν Ioan. Antioch. tit. 14; κτημάτων ἐπεισάγειν trapez. ἢ ἐπεισαγ. vulgate concil. Bruns. Bevereg. - παρεισ. ἑαυτὸν διοικητὴν Ioan. Antiochen. - καλοῖτό τις εἰς ἀφήλικων Ioan. Antiochen. vallicell. - ἐπιτρέποι Ioan. Antioch. vatic. 3. - ἢ χηρῶν Rhalli - φόβον τοῦ κυρίου trapez. column. vallicell. - παραβαίνειν Nomocan. - ἐπιχειρήσειεν Ioan. Antioch. vallicell. - τοῖς ἐκκλησιαστικοῖς Ioan. Antioch.

կրաւնաւորս հնազանդ լինել եպիսկ//(թղ.72ա)ոպոսին, եւ զլռութիւն ողջունելեւ զգոյշ լինեալ, միայն աղաւթից եւ պահոց: Ի տեղիս յորում նվիրեցան ժուժկալել. ոչ եկ{եղ}եցական իւիքս բաղեալ(sic), եւ ոչ ի միաբանել, ընդ այն թողեալ զվանս իւրեանց: Բայց միայն եթէ հրամայել լիցի կարեւոր ինչ առ յեպիսկոպոս քաղաքին, եւ {ոչ} ընդունելի վասն զծառայս զորս կամեսցին միանձնանալ առանց կամաց եւ գիտութեան տէրանց իւրեանց: Իսկ զորս անցանեն զսահմանս մեր, զայս հրամայեմք անհաղորդս լինել, որպէս զի մի անունն Աստուածոյ հահոյեսցի (sic): Վասն զի եպիսկոպոս ի քաղաքին պարտ է զպատշաճաւոր խնամս առնել վանիցն:

δ΄.[83] Οἱ ἀληθῶς[84] καὶ εἰλικρινῶν τὸν μονῆρη μετιόντες βίον, τῆς προσηκούσης ἀξιοῦσθωσαν τιμῆς. Ἐπειδῆ δὲ τινες τῷ μοναχικῷ κεχρημένοι προσχήματι[85], τάς τε ἐκκλησίας καὶ τά πολιτικά διαταράσσουσι[86] πράγματα, περιϊόντες ἀδιαθφόρως[87] ἐν ταῖς πόλεσιν, οὐ μὴν ἀλλά καὶ μοναστήρια ἑαυτοῖς συνιστᾷν[88] ἐπιτηδεύοντες· ἔδοξε μηδένα μὲν[89] μηδαμοῦ οἰκοδομεῖν μηδὲ συνιστᾷν[90] μοναστήριον ἢ εὐκτήριον οἶκον παρὰ γνώμην τοῦ τῆς πόλεως ἐπισκόπου[91]· τοὺς δὲ καθ᾽ ἑκάστην πόλιν καὶ χώραν μονάζοντας, ὑποτετάχθαι τῷ ἐπισκόπῳ, καὶ τὴν ἡσυχίαν ἀσπάζεσθαι, καὶ προσέχειν μόνῃ τῇ νηστείᾳ καὶ τῇ προσευχῇ ἐν οἷς τόποις ἀπετάξαντο προσκαρτεροῦντες· μήτε δὲ ἐκκλησιαστικοῖς μήτε βιωτικοῖς παρενοχλεῖν πράγμασιν ἢ ἐπικοινωνεῖν, καταλιμπάνοντας[92] τά ἴδια μοναστήρια, εἰ μή ποτε ἄρα ἐπιτραπεῖεν[93] διὰ χρείαν ἀναγκαίαν ὑπὸ τοῦ τῆς πόλεως ἐπισκόπου. Μηδένα δὲ προσδέχεσθαι ἐν τοῖς μοναστηρίοις δοῦλον ἐπὶ τῷ[94] μονάσαι παρά γνώμην τοῦ ἰδίου δεσπότου. Τὸν δὲ παραβαίνοντα τοῦτον ἡμῶν τὸν ὅρον, ὡρίσαμεν ἀκοινώνητον[95] εἶ

[83] **Tanner** - Cf. Can ap. 82 (CSP 49), conc. Gangr. (cs. 340), c. 3 (CSP 80), conc. Carth. (419), cc. 64,82 (CSP 301, 322).
[84] **Tanner** - ἀληθινῶς.
[85] **Бенешевич** - σχήματι V.
[86] **Бенешевич** - ἐκταράττουσιV; **Tanner** - ταράσσουσι.
[87] **Tanner** - ἀδιαφόρως.
[88] **Tanner** - συνιστᾶν.
[89] **Tanner** - | μέν.
[90] **Tanner** - συνιστᾶν.
[91] **Бенешевич** - cod. после ἐπισκόπου ставит находящиеся дальше слова μηδένα δὲ ... ὡρισάμεν, но описка эта замечена самим писцом и обведена точками.
[92] **Tanner** - καταλιμπάνοντες.
[93] **Tanner** - ἐπιτραποῖεν.
[94] **Бенешевич, Tanner** - τὸ.
[95] **Бенешевич** - τοὺς δὲ παραβαίνοντας ... ἀκοινωνήτουςV.

ναι, ἵνα μὴ τὸ ὄνομα τοῦ Θεοῦ βλασφημῆται[96]. Τὸν μέντοι ἐπίσκοπον τῆς πόλεως, χρὴ δέουσαν[97] πρόνοιαν ποιεῖσθαι τῶν μοναστηρίων.[98]

Հայերեն հայկածը բացակայում է:

ε΄.[99] Περὶ τῶν μεταβανόντων ἀπὸ πόλεως εἰς πόλιν ἐπισκόπων ἢ κληρικῶν, ἔδοξε τοὺς περὶ τούτων τεθέντας κανόνας παρὰ τῶν ἁγίων πατέρων ἔχειν τὴν[100] ἰσχύν.[101]

:Ե: Ոչ է պարտ զարձակեալս ձեռնադրեալ. ոչ քահանա, եւ ոչ սարկաւագ, ոչ կլերիկոս, եւ ոչ զայլ ոք որք իցեն յեկեղեցական դասու, բայց միայն առանձին յեկեղեցիս քաղաքի կամի գեղջի, կամ ի մարտիրոսական տաճարս, կամ ի վանք, որ ձեռնադրելոցն է վկաեսցի (sic): Իսկ զարձակել ձեռնադրեալս, հրամաեաց (sic) սուրբ ժողովս. անաւգուտ եւ անհաստատ գոլ զայնպիսի ձեռնադրութիւնն, եւ ոչ ամենեւին ուրէք կարասցէ ներգործել յանարգանս ձեռնադրողին:

ς΄.[102] Μηδένα ἀπολελυμένως χειροτονεῖσθαι, μήτε πρεσβύτερον, μήτε διάκονον, μήτε ὅλως τινὰ τῶν ἐν τῷ ἐκκληστικῷ τάγματι, εἰ μὴ εἰδικῶς[103] ἐν ἐκκλησίᾳ πόλεως ἢ κώμης, ἢ μαρτυρίῳ, ἢ μοναστηρίῳ, ὁ[104] χειροτονούμενος ἐπικηρύττοιτο. Τοὺς δὲ ἀπολύτως χειροτονουμένους ὥρισεν ἡ ἁγία σύνοδος ἄκυρον ἔχειν τὴν τοιαύτην χειροθεσίαν, καὶ μηδαμοῦ δύνασθαι ἐνεργεῖν ἐφ᾽ ὕβρει τοῦ χειροτονήσαντος.[105]

:Զ: Զորս միանգամ ի կլերիկոսութիւն կարգեսցին, կամի միակեցութիւն, հրամաեցաք (sic) ոչ ի զինուորու//(թղ.72բ)թիւն, մի յարժանս ինչ աշխարհականս գալ. եւ կամ որ զայս իշխեսցեն առնել, եւ ոչ զղջասցին:

---

[96] **Tanner** - Cf. Rm 2, 24; 1 Tm 6, 1.

[97] **Бенешевич** - τὴνδέουσαν.

[98] **Pitra** - Can. 4.'Επειδὴ τινες Io. Antioch. tit. 33. - σχήματι Iustell. in marg. vallicell. - τὰς ἐκκλησίας Ioan. Antioch. - ἐκ- ταράττουσι vallicell. - διαφόρως column. vatic. 3.- μηδένα μηδαμοῦ Ioan. Antiochen. - ἐπετάξαντο Bevereg. vett. editt. - προσκαρτεροῦνται, vulgate concil. ἀληθινῶς προσκαρτ. vatic. 2. - ἐπὶ δὲ παραβαίνοντας ... ἀκοινωνήτους vallicell.

[99] **Tanner** - Cf. conc. Nic. cc. 15, 16, Can. ap. 14, 15 (CSP 14-15), conc. Antioch. (341), cc. 3,16, 21 (CSP 106-107, 117, 121), conc. Sard. (342/343), cc. 1, 2, 15, 16, 19 (CSP 159-161, 182-183, 185), conc. Carth. (419), cc. 48, 54, 90 (CSP 265-266, 277-279, 334).

[100] **Tanner** - τὴν +ἰδιαν+ ἔχειν.

[101] **Pitra** - Can. 5. Τὴν ἰδίαν ἰσχὺν vulg. concil. petroburg. Ioan. Antioch. tit. 12.

[102] **Tanner** - Conc. Neocaes. (315/324), c. 13 (CSP 81).

[103] **Бенешевич** - ὧν вставл. V; **Tanner** - ἰδικῶς.

[104] **Бенешевич** - ὁ проп. V.

[105] **Pitra** - Can. 6. Μὴ πρεσβύτερον, μὴ διάκονον, μηδὲ Ioan. Antiochen. tit. 25. - ἢ κώμης om. Pedal. - μαρτυρείῳ column.

Որպէս թէ դառնալ յոր նախ վասն Աստուածոյ բաղձաց առնուլ նզովեսցի:

ζ.[106] Τοὺς ἅπαξ ἐνκλῆρῳ τεταγμένους, ἢ καὶ[107] μοναστὰς[108], ὥρισαμεν[109] μήτε ἐπὶ στρατείαν, μήτε ἐπὶ ἀξίαν κοσμικὴν ἔρχεσθαι· ἢ τοῦτο[110] τολμῶντας[111], καΐ μὴ μεταμελομένους[112], ὥστε ἐπιστρέψαι ἐπὶ τοῦ τὸ ὃ[113] διὰ Θεὸν πρότερον εἵλοντο, ἀναθεματίζεσθαι.[114]

:Է: Կլերիկոսք աղքատանոցացն կամ վկաարանիցն (sic), ընդ իշխանութեամբ եպիսկոպոսին լիցին յիւրաքանչիւր քաղաքաց, ըստ սրբոց հարցն աւանդութեանն. եւ մի յանդգնաբար ի բաց լիցին յիւրեանց եպիսկոպոսէն: Իսկ որք իշխեսցեն չրջել զաւրինադրութիւնս զայս պատճառանաւք իմիք, եւ ոչ հաւանեսցին իւրեանց եպիսկոպոսին. կլերիկոսք ընդ կանոնաց պատժաւք լիցին, իսկ միակեցք. եւ աշխարհականք. մնասցեն անհաղորդք:

ή. Οἱ κληρικοὶ τῶν πτωχείων καὶ μοναστηρίων καὶ μαρτυρίων, ὑπὸ τὴν ἐξουσίαν τῶν ἐν ἑκάστη πόλει ἐπισκόπων, κατὰ τὴν τῶν ἁγίων πατέρων παράδοσιν[115], διαμενέτωσαν, καὶ μὴ κατὰ αὐθάδειαν ἀφηνιάτωσαντοῦ ἰδίου ἐπισκόπου[116]. Οἱ δὲ τολμῶντες ἀνατρέπειν τὴν τοιαύτην διατύπωσιν καθ᾽ οἱονδήποτε τρόπον, καὶ μὴ ὑποταττόμενοι[117] τῷ ἰδίῳ ἐπισκόπῳ· εἰ μὲν εἶεν κληρικοὶ, τοῖς τῶν κανόνων ὑποσκείσθωσαν[118] ἐπιτιμίοις· εἰ δὲ μονάζοντες ἢ λαϊκοὶ, ἔστωσαν ἀκοινώνητοι.[119]

:Ը: Որ ոք կլերիկոս առ կլերիկոս ունիցի ինչ, մի թողցէ զիւր եպիսկոպոսն (sic), եւ յաշխարհական դատաւորս ընթասցի, այլ նախ զպատ-

---

[106] **Tanner** - Cf. c. 3, Can. ap. 6, 81, 83 (CSP 11, 49-50), conc. Carth. (419), c. 16 (CSP 230-231).
[107] **Tanner** -] καὶ.
[108] **Tanner** - μονάσαντας.
[109] **Бенешевич** - V выслобл. Мв слове ὡρίσαμεν.
[110] **Tanner** - +τοὺς+τοῦτο.
[111] **Tanner** - τολμήσαντας.
[112] **Бенешевич** - μεταμελουμένουςV (ελ по скобл.).
[113] **Бенешевич** - cod. переправл. τοῦτο в τοῦτω; Patm. 172 ἐπὶτούτῳῷ.
[114] **Pitra** - Can. 7.Ἢ καὶ μοναστάς cum vatic. 2. Palat. Column. Rhalli, Ioan. Antioch. tit. 14; ἢ καὶ μονάσαντας Bruns. vulgate; τεταγμ. Καὶ μοναστάς Pedal. trapez. - τολμήσαντα Ioan. Antioch. - μεταμελλουμένους id. - εἵλαντο vatic. 1, 3, palat.
[115] **Бенешевич** - τάς ... παραδόσειςV.
[116] **Бенешевич** - τοὺςἰδίουςἐπισκόπουςV.
[117] **Tanner** - ὑποτασσόμενοι.
[118] **Tanner** - ὑποκείσθωσαν.
[119] **Pitra** - Can. 8. Καὶ μαρτυρίων om. Vatic. 4. - κατὰ τάς τ. ἀ. Π. παραδόσεις vallicell. - καὶ μὴ καθαυδιάζεσθαι ἢ ἀφηνιᾶν vatic. 4. Vulg. concil. - τοὺς ἰδίους ἐπισκόπους vallicell. vatic. 1 - τὴν τοιαύτην παράδοσιν vatic. 2 - καθ᾽ οἱονδήποτε ad ἐπισκόπῳ om. trapez. et Bevereg. Extat sine varietate in tit. 22 Ioan. Antioch.

ճառն ծանուսցէ իւրում եպիսկոպոսին, եւ ապա նորա կամաւք յոր եւ կամեսցին երկոքեանն. զվրէժն ընդալցին: Իսկ եթէ ոք աւելի առնիցէ քան զայսոսիկ, կանոնական պատիժս կրեսցեն: Եւ թէ կլերիկոս ունիցի ինչ առ իւր կամ առ աւտար եպիսկոպոս, ի սիւնոդոսէ իշխանութեանն դատեսցի: Իսկ եթէ յիշխանութեանն յայն մետրայպաւլիտ, եպիսկոպոս կամ կլերիկոս յերկուանայցէ (sic), կալցէ կամ զէքսարխաւսն// (թղ.73ա) եւ կամ զԿոստանդինուպաւլսու աթոռն, եւ անդ դատեսցին:

Θ΄.[120] Εἴ τις κληρικὸς πρὸς κληρικὸν πρᾶγμα ἔχει[121], μὴ ἐγκαταλιμπανέτω τὸν οἰκεῖον ἐπίσκοπον, καὶ ἐπὶ κοσμικὰ δικαστήρια κατατρεχέτω· ἀλλὰ πρότερον τὴν ὑπόθεσιν γυμναζέτω παρὰ τῷ ἰδίῳ[122] ἐπισκόπῳ, ἤγουν γνώμη αὐτοῦ τοῦ ἐπισκότου παρ᾽ οἷς ἂν τὰ ἀμφότερα μέρη βούλωνται, τὰ τῆς δίκης συγκροτεῖσθαι. Εἰ δὲ τις παρὰ ταῦτα ποιήσοι, κανονικοῖς ἐπιτιμίοις ὑποκείσθω. Εἰ δὲ καὶ[123] κληρικὸς πρᾶγμα ἔχοι[124] πρὸς τὸν ἴδιον ἢ καὶ πρὸς ἕτερον ἐπίσκοπον, παρὰ τῇ συνόδῳ τῆς ἐπαρχίας δικαζέσθω. Εἰ δὲ πρὸς τὸν τῆς αὐτῆς ἐπαρχίας μητροπολίτην, ἐπίσκοπος ἢ κληρικὸς ἀμφισβητοίη, καταλαμβανέτω τὸν[125] ἔξαρχον τῆς διοικήσεως, ἢ τὸν τῆς βασιλευούσης Κωνσταντινουπόλεως θρόνον, καὶ ἐπ᾽ αὐτῷ[126] δικαζέσθω.[127]

